

# ԵՐԵՒԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԵՏԱՂԵԱՅ ԶԵՌԱԳՐԱԿԱԶՄԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ

Բ. Մաս

ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԵՐՈՒ  
ՈՐՈՆ-Ք ՈՒՆԻՆ ՄԵՏԱՂԱՊԱՏ ԿԱԶՄԵՐ

## Մասնօթութիւն

Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրակազմերու մետաղապատումը մը ուղադրաւ երեւոյթ մըն է, մանաւանդ երբ նկատի ունենանք որ մօտ տասը հազար ձեռագրերէն միայն 209 հատը ունին ամբողջական կամ մասնակի արծաթապատում:

Անոնք հայ ազգի պատմութեան դաժան ու դժուարին ժամանակաշրջաններու պատկերը արտացոլացնողներն են եւ համաձայն պատմական Հայաստանի մէջ տիրող բարգաւաճութեան աստիճանին, անոնք ճոխ ու չքեղ են կամ համեստ:

Յաճախ կը գործածուի պահպանակ բառը բնորոշելու համար մետաղեայ ձեռագրակազմերը: Նկատի ունենալով որ կան մետաղապատ կազմեր որոնք ձեռագրերուն ժամանակակից են եւ արծաթապատուած են ոչ թէ միայն պահպանելու, այլ զարդարելու համար մատենանը, եւ կան այնպիսիներ որոնք հետագայ դարերուն արծաթապատուած են մաշումէ փրկելու եւ կամ նուիրատուութեան համար, նախընտրեցի գործածել արծաթապատում բառը, որ ունի աւելի ընդհանուր իմաստ: Շատ քիչ ձեռագրակազմեր կան այլ մետաղներով պատուած, օրինակ՝ արոյր եւ մեծամասնութիւնը կազմուած կամ մասնակիօրէն զարդարուած են արծաթով:

Նկատի ունենալով որ մետաղապատ ձեռագրերը առանձին չեն պահուիր Մատենադարանի մէջ, այլ ընդհանուր թիւի հետ խառն, անոնց թիւերը յաճախ մի քանի հարիւրի ռատումներ կը կատարեն, այնպէս որ ընթերցողը պէտք չէ ակնկալէ օրինաչափ կանոնաւորութիւն մը թիւերու հերթականութեան մէջ: Գալով անոնց ընդհանուր թիւին (209), այդ կը ներկայացնէ մինչեւ 1966-ի ամառը գոյութիւն ունեցողները, քանի որ այդ թուականէն յետոյ դադարած եմ մետաղապատ կազմերը ուսումնասիրելէ: Վերոյիշեալ թուականէն մինչեւ օրս բազմաթիւ նոր նուիրատուութիւններով աւելի ճոխացած է Մատենադարանի ձեռագրերու հաւաքածոն, որոնց շարքին նաեւ մետաղապատ մատենաներ:

Ձեռագրակազմերու չափերը տրուած են մեթրական դրութեան համաձայն, նկատի ունենալով որ Հայաստանի մէջ օգտագործուող չափերն են, եւ երկրորդ, աւելի օրինաչափ են քան գործածութենէ դադարելու դատապարտուած ինչերը (inches), ոտքերը (feet) եւ եարտաները (yards):

Ձեռագիրները եւ իրենց կազմերը չունին օրինաչափ մեծութիւններ եւ ամէն պատուիրատու կամ կազմող հետեւած է իր տրամադրութեան տակ գտնուող նիւթի (մագաղաթի) կտրատման հնարաւորութիւններուն, գործածելով խնայողաբար:

Թէեւ չափերու հետեւողական օրինաչափութիւն չկայ, սակայն կարծես տարբերայնօրէն մատենաներու չափերը մօտաւորապէս 14 × 10 × 4 սմ. ի մօտաւոր տարբերակներն են, ինչ որ մեզ կը համոզէ որ մագաղաթի կտրատման հնարաւորութեան հետեւողականութիւն մը գոյութիւն ունեցած է, համաձայն կաշիի միջին չափերուն եւ որուն հետեւած են հետագայ դարերուն նաեւ թուղթ պատրաստող վարպետները:

Մատենաները արծաթապատուած են մեծամասնութեամբ 3 կամ 4 կողմերէն, որոնք անուանակոչեցինք հետեւեալ կարգով՝ Ա. (առաջին) կող, Բ. (երկրորդ) կող, կռնակ՝ երկու կողերը ծխնիներով իրար միացնող մասը, եւ այն մասը որ կը ծածկէ էջերու բաց մնացած վերջաւորութիւնները՝ փական: Ասոնցմէ գատ, յաճախ երկու կամ երեք շղթաներով կազմուած ժապաւէններ որոնք կը փակեն մատենանը եւ զայն ձեւաւոր վիճակի մէջ կը պահեն, կոչեցինք կղ պանք:

Անցեալին մէջ հանդիպած ենք ցուցակներու ուր փականը կոչուած է կափարիչ, սակայն նկատի ունենալով որ կափարիչ բառը ամբողջական ծածկոյթի իմաստով եւս կարելի է գործածել, այս մասնակի ծածկոյթը նախընտրեցինք կոչել փական:

Գալով ժամանակի ճշգրտմի հարցին, նկատի ունեցած ենք նախ ձեռագրի գրման թուականը: Բացայայտ է որ անոնց մեծամասնութիւնը արծաթապատուած են կաշիով կազմուելէն յետոն, հարիւր կամ աւելի տարիներ յետոյ, երբ նկատուած է որ կաշեպատումը պահպանելու, եւ կամ իրենց հաւատքը, սէրը կամ առատաձեռնութիւնը ցուցաբերելու լաւագոյն միջոցն էր:

Սակայն շատ աւելի բարդ է բուն արծաթապատման ճշգրիտ թուականի որոշումը: Նախ եւ առաջ յիշատակարաններու մէջ շատ քիչ անգամ կը հանդիպինք մետաղապատման մասին որեւէ գրութեան եւ թուականները նշուած են երբեմն մետաղի վրայ կատարուած փորագրութեամբ, կամ երբեք չեն նշուած, նուիրատուի կամ նուիրման նպատակի յայտնումէն յետոյ, զայն նկատելով անկարելի: Արդէն ձեռագրակազմերու մետաղապատ մասերու մեծամասնութիւնը որեւէ արձանագրութիւն չունին:

Մետաղի վրայ կատարուած այն արձանագրութիւնները որոնք ոչ մէկ վարպետի, տեղի կամ թուականի մասին չեն ակնարկել, զանց առած ենք այդ մասին ակնարկելու: Յիշուած են միայն անոնք որոնք յիշարժան են եւ հայ արուեստի պատմութեան ուսումնասիրման համար օգտակար են:

Նոյնն է պարագան տեղի եւ տեղանուններու մասին, ուր նկատի առած ենք նախ գրման վայրը եւ միայն անկէ յետոյ, եթէ հազուադէպօրէն հանդիպած ենք կազմողի եւ անոր ապրած վայրի մասին, այն նշած ենք:

Ձեռագրերու մեծամասնութիւնը նուիրուած են սեփականատիրոջ կամ ստացող ներու կողմէ, յետ օգտագործման, վանքերու եւ եկեղեցիներու, ու այդ առթիւ, համաձայն հնարաւորութեան, երեսպատուած են նուիրատուի կամ ստացող վանքերու ու եկեղեցիներու միջոցով:

Պատուիրատու եւ ստացող բառերը դժուար է իրարմէ զատորոշել, քանի որ հաւանական է որ յիշատակարանի մէջ պատուիրատուն կոչուի «ստացող», ինչպէս նաեւ հետագային, դարեր յետոյ ստացողը:

Շատ քիչ անգամ կը հանդիպինք «արծաթապատող» բառին: Կրնանք ենթադրել թէ կազմող բառը, եթէ գործածուած է ձեռագրի աւարտումէն շատ յետոյ ապրած անձի մը մասին, հաւանաբար արծաթապատողն է, քանի որ արծաթապատումը եւս կազմի աշխատանքին մէկ մասն է:

Յիշատակարաններու մէջ հազիւ մի քանի անգամ նշուած են մետաղի աշխատանքներու մասին, քանի որ յաճախ նախընտրած են մետաղի վրայ արձանագրել այդ մասին, թէեւ յաճախ անկատար կերպով: Կարելի է համոզուիլ որ երկու կարեւոր պատճառներ կան, նախ մետաղի ղիմացկունութիւնը եւ այն որ յիշատակարանները գրուած են յաճախ ձեռագրերու վերջաւորութեան եւ տեղի սակաւութիւնը արգելք հանդիսացած է:

Յիշատակարան բառի ղիմաց, բացի մի քանի ձեռագրերէ, գրած եմ «կազմի մասին տեղ եկութիւն չկայ», քանի որ կազմերու նուիրատուները բաւարարուած են արծաթի վրայ երբեմն կատարուած փորագրութիւններով եւ դրուագումներով որոնք յաճախ անկատար արձանագրութիւններ են:

ՀԱՅԿ ՏԷՐ ԴԵՒՈՆԴԵԱՆ

1

Ձեռնագիր թիվ՝ 197, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 26,3 × 18,3 × 6,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1287  
 ՏԵՂ՝ Ակներ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԾԱՂԿՈՂ՝ Թորոս Ռոսլին  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ կազմը կաշեպատ  
 տախտակ, Ա. կողը արծաթեայ թերթով կեր-  
 տուած խաչ, իսկ շուրջը երկաթե գոյգ լարերով  
 կազմուած պարան: Ընդհանուրը ամրացուած  
 կիսագնդիկներով: Նոյն Բ. կողի վրայ: Ար-  
 ծաթեայ մասերը հին կազմի հետ ժամանակակից  
 չեն:

2

Ձեռնագիր թիվ՝ 2582, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 15,5 × 11,5 հզրմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԶ դար  
 ՏԵՂ՝ Վան  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ, ձեռամբ ՄԲՆ (Մա-  
 րիամին?)  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ 1765-ին (ՌՄԺԴ): Ա.  
 կողի վրայ՝ Քրիստոսի համբարձումը: Բ. կողի  
 վրայ նուիրաբերման տեսարան, Աստուածամօր  
 գիրկը Յիսուս մանուկը: Կոնակը կազմուած  
 շղթաներով: Ա. կողի ներքեւ կայ հետեւեալ  
 արձանագրութիւնը՝ ՄԲ. Աւետարանն արծա-  
 դապատ եղև ձեռամբն (որպէս պատուիրա-  
 տու.) Յովսեփ վարդապետին թվին ՌՄԺԴ: Կը  
 պատկանի Վասպուրականի ոսկերչական դպրո-  
 ցին:

3

Ձեռնագիր թիվ՝ 2843, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 23 × 15 × 5,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1354 թ.  
 ՏԵՂ՝ Աղթ(ամ)ար  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ կան շատ  
 նուրբ, ոչ հայկական զարդեր՝ երկու դրուագ-  
 ուած խաչեր եւ երկու ճարմանդներ: Անցեալին  
 զարդարուած է ակներով, որոնց տեղերը կը  
 մնան պարապ: Բ. կողի վրայ կան զանազան  
 արծաթեայ եւ արոյրէ զարդաբեկորներ: Կը  
 պատկանի Վասպուրականի ոսկերչական դպրո-  
 ցին:

4

Ձեռնագիր թիվ՝ 2846, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 21,5 × 15,5 × 6,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1471 թ.  
 ՏԵՂ՝ Վան  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) տանուտէր Արթուրէն  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողը լըիւ արծաթա-  
 պատ, շուրջը երիզուած արծաթեայ գուգալար  
 պարաններով: Կան 14 հատ մամլուած կլոր  
 զարդեր: Կեդրոնը ձուլուած խաչելութիւն: Ուր-  
 քերու տակ լուսնանման գլուխ (հաւանաբար  
 խորհրդանշող Ադամի գերեզմանը): Ամբողջու-  
 թիւնը ամրացուած է կազմի վրայ կիսակլոր  
 գնդիկներով: Կը պատկանի Վասպուրականի  
 դպրոցին:

5

Ձեռնագիր թիվ՝ 3033, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ անյայտ  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ (?) դարուն կազմուած  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի կեդրոնը, ամ-  
 բողջական արծաթ թերթի կեդրոնը Քրիստոսի  
 մկրտութեան տեսարանը, երեք հրեշտակներ եւ  
 Ս. Հոգիի խորհրդանշանը՝ աղաւնին: Շրջանակ-  
 ուած է շատ ճոխ եւ գեղեցիկ որակաւոր կերպով  
 դրուագուած շրջազարդերով:

6

Ձեռնագիր թիվ՝ 3847, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 20 × 14 × 5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ արոյրով, վրան 25  
 շրջանակներ, որոնցմէ 4-ը ունին ակներ: Կեդրո-  
 նը մեծ խաչ: Անկիւնները կան չորս ճարմանդ-  
 ներ:

7

Ձեռնագիր թիվ՝ 3848, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 20 × 15,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԶ դար  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ քան-  
 դակուած Քրիստոսի խաչելութիւնը եւ երկու  
 մարդկային կերպարանքներ, խորը՝ ծաղ-  
 կազարդ: Շրջանակուած է նոյն արծաթ թերթով  
 քանդակուած կիսագնդիկներ, երիզուած ար-  
 ծաթեայ գուգալար պարաններով: Բ. կողի վը-  
 ռայ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, շուր-  
 ջը ծաղ կանկարներով:

8

Ձեռնագիր թիվ՝ 3849, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 18 × 13 × 3 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԶ դար  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ ամբողջութեամբ ար-  
 ծաթապատ. Ա. կողի կեդրոնը խաչ, ծաղիկ  
 եւ դէմք: Կան 2 կերպարներ եւ 3 հրեշտակներ

(4-րդը կորսուած): Բ. կողի կեդրոնը խաչ եւ 5  
 կերպարներ, շրջանակուած ցանցկէնով եւ  
 գնդիկներով: Ամէնէն ուշագրաւ մասը կոնակն  
 է, գործուած արծաթեայ լարերու շղթաներով:  
 Ամբողջութիւնը ամրացած է կիսակլոր գլխով  
 դամբերով:

9

Ձեռնագիր թիվ՝ 4060, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 24 × 16,5 × 6,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ (?) դար  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ (նորոգող) ներսէս  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ անոճ  
 պատահական զարդեր, իսկ հետագային ամրաց-  
 ուած է մեծ խաչ մը: Կան 5 մեծ ճարմանդներ եւ  
 խոշոր կիսակլոր բազմաթիւ գնդիկներ (գա-  
 մեր):

10

Ձեռնագիր թիվ՝ 4648, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 26 × 17,7 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1456 թ.  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Հռիփսիմէ  
 ՆՈՐՈԳՈՂ՝ Ազատ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ (հեղինակ) Փիլիպպոս  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ, ան-  
 կանոն կերպով դասաւորուած վեց խաչեր,  
 որոնցմէ չորսը եղած են ակներով զարդարուած:  
 Այժմ կան 2 ազատ եւ 1 յակինթ: Զարդերը ամ-  
 րացուած են խոշոր գնդիկներով (գամեր):

11

Ձեռնագիր թիվ՝ 4711, Իւղաբերից Աւետա-  
 րան  
 ՉԱՓԵՐ՝ 46,5 × 34,2 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԹ (?) դար  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՄՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչեն  
իջեցումը, շրջանակուած ծաղկեպակով:  
Շուրջը շղթայաձև շրջանակ: Բ. կողի վրայ  
Քրիստոսի Յարուժիկը եւ իւղաբեր կիններ:  
Արծաթեայ մասերը ամբողջութեամբ դրուագ-  
ուած են եւ ծակոտկէն: Աշխատանքը կը կրէ  
արեւմտաեւրոպական ոսկերչութեան ազդեցու-  
թիւնը:

12

Ձեռնագիր թիւ՝ 4712, Իւղաբերից Աւետա-  
րան  
ՁԱՓԵՐ՝ 46 x 35 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1853 թ.  
ՏԵՂ՝ Մշոյ Ս. Կարապետի վանք  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Յարուժիկն վարդապետ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ արծաթ  
թերթ, քանդակուած խաչելութիւն, Ս. Աստ-  
ուածածին եւ Մարիամ Մազթաղենացի, շրջա-  
նակուած ճառագայթներով եւ գնդիկազարդ Ե-  
րիզով, որոնք բոլորը ամրացուած են 4 մեծ գա-  
մերով: Բ. կողի վրայ Քրիստոսի մկրտութիւնը:  
Բոլորը ոսկեջրուած: Կը պատկանի Վասպուրա-  
կանի ոսկերչական դպրոցին:

13

Ձեռնագիր թիւ՝ 4713, Իւղաբերից Աւետա-  
րան  
ՁԱՓԵՐ՝ 40 x 28 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1892 թ.  
ՏԵՂ՝ Կոստանդնուպոլիս  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Թովմայ Սարկաւազ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ Քրիստո-  
սի խաչէն իջեցումը, իսկ Բ. կողի վրայ Յարու-  
թիւնը: Կատարուած ծակոտկէն դրուագումով  
եւ շրջանակուած արծաթեայ զարդերով:

14

Ձեռնագիր թիւ՝ 4714, Իւղաբերից Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 38 x 27 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1832-էն առաջ  
ՏԵՂ՝ Կոստանդնուպոլիս  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Վարդան Կիմեցի  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ (կազմի հեղինակ) Մահտեսի  
Պողոս  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ կաշեպատ հաստ  
թուղթ, թաւիչ եւ արծաթ: Ա. կողի վրայ  
դրուագուած է Քրիստոսի Յարուժիկը եւ ան-  
կիւնները՝ 4 հրեշտակներ: Բ. կողի վրայ  
Քրիստոսի խաչելութիւնը: Բոլորը բարձրորակ  
դրուագումով կատարուած:

15

Ձեռնագիր թիւ՝ 4715, Խորհրդատետր  
ՁԱՓԵՐ՝ 33,5 x 26,5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1832-էն առաջ  
ՏԵՂ՝ Կոստանդնուպոլիս  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Կիմեցի Վարդան  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի կեղերոնը  
դրուագուած է Քրիստոսի խաչելութիւնը, շուր-  
ջը ճաճանչներով: Կողի եզերքը շղթայանման  
շրջանակ: Նոյնը երկրորդ կողի վրայ:

16

Ձեռնագիր թիւ՝ 4823, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 36 x 26 x 6 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1224 թ.  
ՏԵՂ՝ հաւանաբար Գլաձոր  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Խաղբակեանց  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ տափակ  
արծաթեայ թերթով կերտուած խաչ, իսկ շուրջը  
զուգալար պարաններով շրջագարդ: Խորքը  
դրուագուած: Խաչը ամրացուած է խոշոր գըն-  
դիկներով, որոնց նմանները կը զարդարեն սոյն  
կողը: Խաչի կեղերոնական ակը այժմ կորսուած  
է: Բ. կողը նոյն խոշոր գնդիկներով պատուած:

17

Ձեռնագիր թիւ՝ 5432, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 25 x 17,5 x 8 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԲ դար  
ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Գրիգորիս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի կեղերոնը  
դրուագուած խաչելութիւն, իսկ չորս անկիւն-  
ներու վրայ ձուլածոյ փոքր խաչելութիւններ:  
Շրջանակուած է զուգալար պարաններով: Ան-  
ցեալի 44 ակերէն կը մնան միայն 22 հատ,  
բոլորը կապոյտ: Բ. կողի վերեւը դրուագուած է  
Քս. ի թաղման տեսարանը, ներքեւը խաչ:

18

Ձեռնագիր թիւ՝ 5513, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 28 x 18,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1453 թ.  
ՏԵՂ՝ հաւանաբար Վան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Խաչատուր, վերջին ստացող՝  
Տանուտէր Միքայել  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ Յովհաննէս եւ Թումայ(?)  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐՈՅՐԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչ,  
կեղերոնը նարնջագոյն ազատ, անկիւններու  
վրայ խոշոր կիսակոր գամեր որոնց նմանները  
կը ծածկեն ազատ տարածութիւնը: Ունի 3 կըր-  
պանքներ: Չորս աւետարանիչներու խորհրդա-  
պատկերները, զետեղուած են հետեւեալ հերթա-  
կանութեամբ՝ հրեշտակ, արծիւ, ցուլ եւ առիւծ:  
Կը պատկանի Վասպուրականի ոսկերչական  
դպրոցին:

19

Ձեռնագիր թիւ՝ 5516, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 27 x 18 x 6 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1592 թ.  
ՏԵՂ՝ Բոլենց (Մոձոց Երկիր)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ Վարդան  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ Յովհաննէս եւ Թումայ եղ-  
բայրներ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ Այլեւ կազմող սք. աւետա-  
րանիս գմեղաւոր եւ գամարժան գիարագատ  
եղրա(յ)րին ըզՅ(ո)վ(հա)նեսս եւ գուստա-  
(վարպետ) Թումէն յիշեցէք... Բագում  
աշխատութեամբ աւարտեցեն ամէն...  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի չորս անկիւն-  
ներու վրայ չորս աւետարաններու խորհրդա-  
պատկերները հետեւեալ հերթականութեամբ՝  
առիւծ, հրեշտակ, արծիւ եւ ցուլ: Ընդհա-  
նուր տարածութեան վրայ կիսակոր գլխով  
խմբուած գամեր: Կը պատկանի Վասպուրակա-  
նի ոսկերչական դպրոցին:

20

Ձեռնագիր թիւ՝ 5576, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 20 x 15 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1598 թ.  
ՏԵՂ՝ Ոնջան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) Թումաշան  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչէն  
իջեցումը, շրջանակուած մասամբ ոսկեջրուած  
արծաթեայ զարդերով: Բ. կողի վրայ խաչելու-  
թիւն, դրուագուած:

21

Ձեռնագիր թիւ՝ 5577, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 21 x 14,5 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ դար  
ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՅՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկություն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի կեղերոնը  
Քրիստոսի յարութեան տեսարանը՝ դրուագ-  
ուած: Չորս անկիւնները հրեշտակներ: Ձեռագրի  
կռնակը նուրբ շղթայ: Անցեալի 3 կղպանքնե-  
րէն այժմ կը մնան երկուքը:

22

Ձեռնագիր թիւ՝ 5578, Աւետարան  
ՁԱՓԵՐ՝ 20 x 14,5 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1722 թ. (?)

ՏԵՂ՝ Կիմ (Վան)  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Տէր Մելիքսէթ քահանայ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի կեդրոնը կայ  
 խաչ մը, որուն ակը այժմ չկայ: Չորս անկիւն-  
 ները մետալիոններու մէջ տեղաւորուած են  
 սաւետարանիչներու խորհրդապատկերները  
 (քանդակներ) հետեւեալ հերթականութեամբ՝  
 հրեշտակ, արծիւ, ցուլ եւ առիւծ: Մնացեալ տա-  
 րածութեան վրայ ցանցնուած կիսակլոր գը-  
 լուխով գամեր: Բ. կողի կեդրոնը խաչելութիւն  
 ձուլածոյ եւ 14 գամեր: Կան անցեալի երեք  
 կղպանքներու հետքերը: Կը պատկանի Վաս-  
 պուրականի ոսկերչական դպրոցին:

23

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5579, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 20,5 x 14 x 4 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ  
 ՏԵՂ՝ ՈՅԷան  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Մահտեսի Միրզաջան  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի վրայ Գրիստոս  
 աղօթողի կերպարանքով, ձախ կողմը՝ հրեշտակ  
 իսկ գլխավերեւը՝ աղանի, հոգեգալստեան  
 խորհրդանիշները: Շուրջը զարդաքանդակ: Բ.  
 կողի կեդրոնը կայ խաչ, վրան ձուլածոյ խաչե-  
 լութիւն, շուրջը պարզ արծաթեայ շրջազարդ:

24

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5580, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 19,5 x 13 x 4 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1622 թ.  
 ՏԵՂ՝ Բաղեշ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Ստեփանոս Կրօնաւոր  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողը լրիւ արծաթա-  
 պատ, կեդրոնը՝ խաչելութիւն եւ 2 կանաչի

կերպարանքներ (Աստուածամայր եւ Մ. Մագ-  
 թաղենացի, բոլորը շատ թեթեւօրէն դրուագ-  
 ուած եւ շրջանակուած զուգալար պարան-  
 ներով: Բ. կողը, նոյնպէս լրիւ արծաթապատ,  
 կեդրոնը՝ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ:  
 Կռնակը շղթաներով միացած: Կան երկու կըղ-  
 պանքներ: Ուշագրաւ աշխատանք, պարսկական  
 զարդարուեստի ազդեցութեամբ:

25

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5592, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ անյայտ  
 ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ(?) դարուն կազմուած  
 ՏԵՂ՝ Կարին(?)  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի վրայ Գրիստոս  
 Ամենակալ, նստած գահի վրայ: Բ. կողի վրայ  
 չորս Աւետարանիչները, կանգնած: Երկու  
 կողերը շրջանակուած գեղեցիկ զարդաքան-  
 դակներով: Բոլորը դրուագուած: Նկատի ունե-  
 նալով երկու կողերու կարճութիւնը, կարելի է  
 ենթադրել որ ուրիշ մատեանէ մը տեղափոխ-  
 ուած է:

26

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5633, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 18 x 13 x 5,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ կազմի թուական 1711 թ.  
 ՏԵՂ՝ Կարս  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Թորոս Երէցի որդի Տէր Ղուկաս  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի վրայ խաչե-  
 լութիւն իսկ Բ.-ի վրայ Աստուածածին եւ  
 հրեշտակներ: Որոշ մասեր կը կրեն արեւ-  
 մտաեւրոպական դրուագման ազդեցութիւն,  
 սակայն Աստուածածնայ քանդակը ազգային  
 դրոշմ կը կրէ, իսկ խաչելութեան տեսարանը  
 Վասպուրականի դրուագման ազդեցութեամբ  
 կատարուած է: Կը պատկանի Կարնոյ ոսկերչա-  
 կան դպրոցին:

27

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5634, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 20 x 13 x 4 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1647 թ.  
 ՏԵՂ՝ հաւանաբար Սիւնեաց նահանգ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Սիմէոն Վարդապետ Ապարանցի  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի վրայ խաչե-  
 լութիւն եւ երկու կողմերը Աստուածածին եւ  
 Մարիամ Մագթաղենացի: Բ. կողի վրայ Աստ-  
 ուածածնայ եւ Յիսուս Մանուկի նուիրաբերման  
 տեսարան, որոնց շուրջի ճաճանչները կատար-  
 ուած են գրչային փորագրութեամբ, թէև մնա-  
 ցեալ մասերը բարձրաքանդակ դրուագուած են:  
 Կան անցեալի 3 կղպանքներու հետքեր:

28

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5635, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 18,5 x 14 x 4,5 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1422 թ.  
 ՏԵՂ՝ Տարբերունի, Բերկրի, (Նղալանք)  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Յովհաննէս արեղայ, վերջին  
 ստացող Մանդո  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ (նորոգող) Մարտիրոս  
 Եպիսկոպոս  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի վրայ արծա-  
 թեայ խաչ հինգ քարերով զարդարուած, որոնց-  
 մէ մէկը, ամբլուստոս եւ չորսը ազատ: Չորս  
 անկիւնները զանազան կերպարներ:

29

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5636, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 18,5 x 12,5 x 4 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1676 թ.  
 ՏԵՂ՝ Քարահատ գիւղ (Քանձակ)  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Տէր Մովսէս  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի կեդրոնը խա-  
 չելութիւն, անկիւններու վրայ չորս հրեշտակ-  
 ներ, բոլորը արծաթ թերթերու վրայ դրուագ-

ուած: Զուգալար պարաններով զուգորդուած  
 գնդիկներու շարք մը կը շրջանակէ կողը:  
 Բ. կողի կեդրոնը Մարիամ Աստուածածին եւ  
 Յիսուս Մանուկ, դրուագուած, մնացեալը  
 նախորդի նման: Կազմի կռնակը արծաթ նուրբ  
 լարերով գործուածք, գնդիկազարդ վերնազար-  
 դերու յաւելումով, իսկ փականին վրայ չորս  
 հրեշտակներ: Ունի երեք կղպանքներ: Կը պատ-  
 կանի Սիւնեաց ոսկերչական դպրոցին:

30

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5637, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 17 x 11 x 4 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1636 թ.  
 ՏԵՂ՝ Կիմ (Վան)  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Ստեփանոս Վարդապետ  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ երկու կողերու եւ փա-  
 կանի վրայ դրուագուած Տէրունական քան-  
 դակներ, կռնակը ունի հորիզոնական շղթաներ,  
 հաստ լարերով, որոնք կը ծառայեն երկու  
 կողերու միացման եւ շարժունակութեան: Ան-  
 ցեալի երեք կղպանքներէն այժմ կը մնայ միայն  
 մէկը: Կը պատկանի Վասպուրականի ոսկերչա-  
 կան դպրոցին:

31

ՁԵՌԱԳԻՐ ԹԻՒ՝ 5638, Աւետարան  
 ՉԱՓԵՐ՝ 15,5 x 11 x 3 սմ.  
 ԺԱՄԱՆԱԿ՝ 1678-էն առաջ  
 ՏԵՂ՝ անյայտ  
 ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
 ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Մահտեսի Դիլանջի  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
 չկայ:  
 ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ Է՝ Ա. կողի վրայ խաչե-  
 լութեան տեսարանը, շրջանակուած զուգալար  
 պարաններով զուգորդուած զարդանկարներով:  
 Բ. կողի կեդրոնը Մարիամ Աստուածածինը եւ  
 Յիսուս Մանուկ, նախորդի նման շրջանակ-  
 ուած: Փականի վրայ կան զարդեր: Վերոյիջեալ  
 երեք մասերը դրուագուած են, իսկ կռնակի  
 վրայ կայ շատ թեթեւ սեւատապատուած արծա-

նագրութիւն, ազգային ոճով տառերով: Կը պատկանի Կարնոյ ոսկերչական դպրոցին:

32

Ձեռնագիր թիւ՝ 5639, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 16 x 11,5 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1673 թ.  
Տե՛ղ՝ Գերաթաղ (Որոտան Երկիր)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Յովհաննէս Կրօնաւոր  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ միայն Ա. կողի վրայ:  
Կեղրոնի վրայ Գրիստոսի խաչելութիւնը, շուրջը  
զարդեր: Արժէքաւոր աշխատանք ազգային  
ոճով:

33

Ձեռնագիր թիւ՝ 5640, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 16 x 11,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1674 թ.  
Տե՛ղ՝ Ստամպոլ (Կոստանդնուպոլիս)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Գրիգոր քահանայ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ ծաղիկ-  
ներ եւ քառակուսիներ, իսկ Բ. կողի կեղրոնը՝  
Գրիստոս, որ քանդակուած է նոյնպէս փականի  
վրայ, ուր կայ արձանագրութիւն:

34

Ձեռնագիր թիւ՝ 5641, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 14 x 10 x 4,5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1638 թ.  
Տե՛ղ՝ Ստամբոլ (Կոստանդնուպոլիս)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Սիմէոն  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկու-  
թիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ՝ խաչե-  
լութիւն, Բ.-ի վրայ համբարձման տեսարանը,  
իսկ փականի վրայ չորս աւետարանիչները,  
բոլորը դրուագուած: Կոնակի վրայ ամրակու-  
արծաթ շղթայ, հիւսուած: Կը պատկանի Կոս-

տանդնուպոլսոյ հայկական ոսկերչական են-  
թադպրոցին:

35

Ձեռնագիր թիւ՝ 5642, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 14,5 x 9,5 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1666 թ.  
Տե՛ղ՝ Ջուղայ (Նոր Ջուղայ, Սպահան)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Տէր Պողոս (քահանայ)  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ կազմի Ա. կողի վրայ  
ձուլածոյ խաչելութիւն, երեք կազմի ակներով,  
որոնց չորրորդը այժմ կորսուած է: Բ. կողի վրայ  
հինգ ակներ (մէկը կանաչ եւ չորսը կարմիր):  
Ամբողջութեամբ դրուագուած, փոքր յաւել-  
ուածներով, ծաղկապատ մակերեսի վրայ: Կը  
պատկանի Նոր Ջուղայի հայկական ոսկերչա-  
կան ենթադպրոցին:

36

Ձեռնագիր թիւ՝ 5643, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 14,5 x 10,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ ժէ դար  
Տե՛ղ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ կազմի Ա. կողի կեղրո-  
նական մասի վրայ, շրջանակի մէջ կը որ ապակի,  
տակը՝ դիպակ (կարմիր թղթի վրայ ոսկեգոյն  
ծաղիկներ, վերեւն ու ներքեւը 5-ական հատ  
կարմիր եւ կապոյտ ակներ, որոնց մէկ մասը  
այժմ կորսուած է: Նոյնը Բ. կողի վրայ: Ուշա-  
գրաւ է կոնակը, երկու զուգահեռ արծաթ թեր-  
թերով, որոնք կ'ապահովեն երկու կողերու շար-  
ժանակութիւնը երեք երկար եւ ուղղահայեաց  
ծխնիներով: Կան երկու կղպանքներու հետքեր:

37

Ձեռնագիր թիւ՝ 5644, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 13 x 9 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ (հաւանաբար ժէ-րդ  
դար)

Տե՛ղ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Ղուկաս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչե-  
լութիւն, իսկ Բ. կողի վերեւը՝ համբարձման տե-  
սարան: Կոնակը ողորկ արծաթապատ: Երկու  
կողերու խորը հարուստ ծաղկանկարներ, ամ-  
բողջութեամբ դրուագուած:

38

Ձեռնագիր թիւ՝ 5645, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 14 x 10,5 x 6,5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1635 թ.  
Տե՛ղ՝ Վան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Զիրաք  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչե-  
լութիւն, իսկ Բ. կողի վրայ Մարիամ Աստ-  
ուածածին եւ Յիսուս Մանուկ: Կազմի կոնակը  
արձանագրութիւն, գրիչով խոր փորագրուած  
եւ խաչ՝ դրուագուած: Ունի գեղեցիկ դրուագ-  
ուած փական, խաչազարդ: Ծաղկազարդ քան-  
դակներ կը պատեն ընդհանուր դրուագուած  
կազմը: Կը պատկանի Վասպուրականի ոսկեր-  
չական դպրոցին:

39

Ձեռնագիր թիւ՝ 5646, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 13 x 10 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1672 թ.  
Տե՛ղ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Յովհաննէս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչե-  
լութիւն իսկ Բ. կողի կեղրոնը Աստուածածին  
եւ Յիսուս Մանուկ: Կոնակը փորագրուած  
արձանագրութիւն, կափարիչի վրայ երեք խա-  
չեր: Խորերը ծաղկազարդ դրուագուածով:

40

Ձեռնագիր թիւ՝ 5647, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 14 x 10 x 3 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1293 թ.  
Տե՛ղ՝ Անաւարզայ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Գրիգոր արքեպիսկոպոս  
ատաշնորդ Անաւարզայ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ, սակայն կրնանք ենթադրել որ հետագայ,  
հաւանաբար ժէ դարու դործ է:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ միայն Ա. կողի վրայ,  
որու կեղրոնը պարանագարդ տափակ խաչ մը եւ  
շուրջը կիսակը որ գլխով խոշոր գամերով զար-  
դարուած է: Կը պատկանի ոսկերչական դպրոցի  
անկումային շրջանին:

41

Ձեռնագիր թիւ՝ 5648, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 13 x 9,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1663 թ.  
Տե՛ղ՝ Ակունք կամ Պազարչայ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Տէր Յովհաննէս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ քան-  
դակուած է Մարիամ Աստուածածինը, իսկ Բ.-ի  
վրայ Գրիստոսի խաչելութիւնը:

42

Ձեռնագիր թիւ՝ 5649, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 12 x 8,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1671 թ.  
Տե՛ղ՝ Եյաղ գաւառ, Ակունք գիւղ, որ կոչի  
Պազարչայ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն  
չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ երկու կողերը անբող-  
ջութեամբ արծաթապատ, դրուագուած: Ա.  
կողի կեղրոնը խաչելութիւն, իսկ Բ.-ի մէջ-  
տեղը Աստուածամայր: Երկուքի խորերը դըր-

ուսագրուած են հայկական մանրանկարչութեանն թելադրուած գորգատերեւներ, իսկ շուրջը երեքական գուգահեռ գուգալար պարաններով հիւսուած «հիւակէն» (entrelacs): Կոնակը երկու կողերն իրար միացնող 9 շարք շղթաներ: Փականի վրայ քանդակուած է հետեւեալ արձանագրութիւնը՝ «Յիշ(ա)տ(ա)կ է արծաթեայ աւետարանս Վանեցի Կարապետ Վ(ա)րդ(ա)պետին եւ ծնողացն իմոյ Պ(ա)ր(ո)ն Մանուիսի Սարգիսի, մօրն Եղիսապիեթին, քվերցն նազուիկն հանգուցեոյն ի Գ ւ, քվ ՌՄԺ (= 1761): Երկու մասերու բաժնուած արձանագրութեան կեդրոնը բարձրաքանդակ խաչ: Կը պատկանի Վասպուրականի ոսկերչական դպրոցին:

43

Ձեռնագիր թիւ 5650, նարեկ եւ Լուծմունք ներսէսի Լամբրոնացոյ ՁԱՓԵՐ՝ 12,5 x 9 x 4,5 սմ.

ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ դար  
ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Արծաթապատ դրուագուած երկու կողերու վրայ, որոնցմէ Ա. կողի վրայ խաչ իսկ Բ.՝ վրայ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ: Երկու շարք գուգալար պարաններու եւ մանր գնդիկներու շարքեր:

44

Ձեռնագիր թիւ 5651, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 12,5 x 8 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1333 թ.

ՏԵՂ՝ Ն(որ) Ավանք (Նորավանք?)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Գրեգորիս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ կազմի հեղինակ՝ Փիլիպպոս արքայ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ ձուլածոյ կերպար Քրիստոսի, խորը փորագրուած: Բ. կողի վրայ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, նախորդի նման գամերով ամրացուած: Կոնակը գուգահեռ շղթաներ: Փականի վրայ երկու

ցանցկէնակերտ խաչեր եւ 32 հատ բերդակ եւ յակինթ: Ունի երկու կղպանքներ, կազմուած շղթաներով: Ամբողջութիւնը ոսկեջրուած:

45

Ձեռնագիր թիւ 5652, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 12 x 9,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1651-էն առաջ

ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Ալֆաթուս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ Ս. Մատթէոսի, իսկ Բ.՝ վրայ դրուագուած է Քրիստոսի խաչելութեան քանդակները: Կոնակի վրայ փորագրուած զարդեր: Կան անցեալի երկու փականներու հետքեր:

46

Ձեռնագիր թիւ 5653, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 11 x 8 x 5,5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ դար

ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ կազմի Ա. եւ Բ. կողերու վրայ զանազան դրուագուած զարդեր, որոնց շուրջերը շրջանակուած են գուգալար պարաններով: Կոնակի վրայ փորագրուած արձանագրութիւն, դրուագուած զարդեր եւ ցանցկէն կտորներ: Կան երկու կղպանքներ:

47

Ձեռնագիր թիւ 5654, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 12 x 8 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ դար

ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ ձուլածոյ խաչելութիւն, որու չորս թեւերուն վրայ ընդե-

լուգուած են 2 յակինթներ եւ 2 արուեստական ակներ: Կան զանազան դրուագուած զարդեր: Բ. կողի վրայ Աստուածածին եւ Յիսուս Մանուկ, զարդարուած նախորդի նման, սակայն չորս կապոյտ քարերով: Կոնակը կան դրուագուածներ եւ ցանցկէնային զարդեր: Ունի անցեալի երկու փականներու հետքեր:

48

Ձեռնագիր թիւ 5655, Մատեան Ողբերգութեան ՁԱՓԵՐ՝ 13,5 x 9,5 x 2 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1672 թ.

ՏԵՂ՝ Վան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ արծաթ թերթ, ուր կեդրոնը դրուագուած է «Գառն Աստուծոյ»: Հետագային վրան գամերով ամրացուած է ձուլածոյ խաչելութիւն, ուր գլխավերեւը ընդեկողուած է իսկական ձուլածոյ յակինթ մը: Ամբողջութիւնը ամրացուած է կաշիի վրայ չորս մեծ կիսագնդիկաւոր գամերով: Կը պատկանի Վասպուրականի ոսկերչական դպրոցին:

49

Ձեռնագիր թիւ 5656, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 11 x 8,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1669 թ.

ՏԵՂ՝ Արզրում (Կարին)  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Ազարիայ սարկաւագ, երկրորդ ստացող Մահտեսի Սուքիաս, 1823 թ.  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ 1805, կազմեցի գաւետարանս վ(աս)ն յիշատակի վաղամեռիկ որդւոյս Գարեգին...  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ էջ 254, գրեցաւ Ս ք Աւետարանս ձեռամբ եւ քարմատար Յովհաննէս ս(ա)րկ(ա)ւ(ա)գի արգրումցոյ (Կարնեցի) ... ի քվ ՌՃԺԸ հայոց (1669 թ.). մարգագ ամսոյ...  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ փորագրուած է Քրիստոսի կերպարանքը սկիհէն դուրս: Բ. կողի կեդրոնը ցանցկէնապատ խաչ եւ

չորս փորագրուած կերպարներ, շրջանակուած ցանցկէնով: Կազմի կոնակը գուգահեռ, հաստ արծաթեայ լարերով շղթաներ: Կը պատկանի Կարնոյ ոսկերչական դպրոցին:

50

Ձեռնագիր թիւ 5735, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 13,5 x 10 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1707 թ.

ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Սանդիտ (Սանդուխտ?)  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի կեդրոնը ձուլածոյ խաչելութիւն եւ արծաթի վրայ դրուագուած ութ հրեշտակներ եւ չորս զարդեր: Բ. կողի կեդրոնը Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, շուրջը նախորդի նման: Կազմի կոնակը երեք գուգահեռ ծխնիներու վրայ շարժող արծաթեայ թերթեր, զարդերով: Փականը միակտուր արծաթ թերթ, շուրջը գնդիկներ:

51

Ձեռնագիր թիւ 5736, Աւետարան ՁԱՓԵՐ՝ 24 x 17 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1290 թ.

ՏԵՂ՝ Դրազարկ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Մշոյ Ս. Կարապետի վանք  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ (կազմը նորոգող) Շահում  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին այլ տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի կեդրոնը խաչ, իսկ շուրջը ծաղիկներ, հանումներով: Բ. կողի վրայ տասներմէկ խաչեր, ամրացուած կիսակող վերջաւորութեամբ գամերով:

52

Ձեռնագիր թիւ 5786, Աւետարան ՁԱՓԵՐ՝ անյայտ  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1602 թ. կազմուած

ՏԵՂ՝ Վան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ Լարաբեկ, որդի Պարնի  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ (Թումայ?)  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ թուականիս հայոց ազգի ՌԾ մէկ աւելի եւ Լարաբեգ որդի Պարնի

գարդարեցի գաւետարանս հրաշալի, ոսկի գաւծով եւ արծաթիւ, դնեն յատեանն բազմոցի ի դրունս Սբ. Խաչի եւ Սբ. Ստեփանոս նախավկ(այ)ի եւ զմեզ յիշեն ի յաղաթի ի հայրապետութեան փոքր Գրիգորիս կ(ա)թ(ո)ղիկ(ո)սի որ եմ ն(որ)այ եղբար որդի...

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ կայ խաչի մը հետքերը եւ չորս աւետարանիչներու խորհրդապատկերները՝ հրեշտակ (Ս. Մատթէոս), արծիւ (Ս. Յովհաննէս), եզ (Ս. Ղուկաս), առիւծ (Ս. Մարկոս): Զարդարուած է համաչափ կերպով դասաւորուած կիսակոր գլխով գամերով: Կը պատկանի Վասպուրականի ոսկերչական դպրոցին:

53

Ձեռնագիր թիւ՝ 6085, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 13 x 9 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1661 թ.

ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչելութիւն, զանազան ձուլածոյ զարդեր որոնք միահիւսուած են ցանցկէնային աշխատութեանը: Բ. կողի վրայ Աստուածածին եւ Յիսուս Մանուկ, զարդերը նախորդի նման: Կռնակը ուռուցիկ ծաղիկներ: Փականի կեդրոնը դրուագուած է Գրիստոսի եւ հրեշտակի մը կերպարները, շուրջը ցանցկէնային շղթայ, գործուած:

54

Ձեռնագիր թիւ՝ 6093, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 14 x 10 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1604

ՏԵՂ՝ Խիզան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Մահտեսի խոջայ Ատոմ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ չորս կողմերու վրայ պարսկական զարդարուեստի ազդեցութիւնը կը ըրող զարդաքանդակներով եւ վրան յաւելուած հրեշտակներով: Ունի երկու կղպանքներ: Ոսկերչուած է ամբողջութեամբ:

55

Ձեռնագիր թիւ՝ 6094, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 15 x 11 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ Ժէ դար  
ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչելութիւն եւ անկիւններու վրայ չորս հրեշտակներ: Բ. կողի վրայ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, միայն երկու հրեշտակներով, իսկ միւս երկուքը կորսուած: Կազմի կռնակը արծաթ թերթ, երկու շղթաներով յաւելուած: Նոյնը փականի վրայ, ուրտեղէն կը մեկնին երեք շղթայակերտ գօտիներ, որոնք շրջանցելով ամբողջ կազմը, կը կատարեն կղպանքի դեր: Ամբողջութիւնը դրուագուած:

56

Ձեռնագիր թիւ՝ 6201, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 40 x 33 x 8 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1038 թ.  
ՏԵՂ՝ Տարոն, Տուրուբերան  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ երկու կողերու վրայ, դրուագմամբ: Ա. կողի կեդրոնը ճաճանչազարդ խաչելութիւն, շրջապատուած ոճաւորուած ծաղիկներով եւ զանազան կրօնական կերպարներով: Բ. կողի կեդրոնը Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, իսկ մնացեալ մասը նախորդի նման: Վերջաւորութեան կայ արձանազրուութիւն, որ կը հաստատէ թէ արծաթապատուած է 1851 թուին:

57

Ձեռնագիր թիւ՝ 6341, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 23 x 16,5 x 3,5 սմ., իսկ կազմը բացառաբար աւելի մեծ՝ 28 x 19,5 x 6,5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1684 թ.  
ՏԵՂ՝ Կաֆայ, Ղրիմի թերակղզի  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Պարոն Սաֆար

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ ամբողջութեամբ ոսկերչուած արծաթով: Երկու կողերու վրայ կան ուռուցիկ մակերեսի վրայ ճենապակեայ կրօնական կերպարներ, 5-ական հատ: Ճենապակեայ մետալիոններու վրայ կան ուռուցիկ արձանազրուութիւններ, թէեւ աշխատանքի ոճը կը կրէ արեւմտաեւրոպական ոսկերչութեան ազդեցութիւնը:

58

Ձեռնագիր թիւ՝ 6436, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 23 x 17 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1669 թ.  
ՏԵՂ՝ Ջուղայ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Խոջայ Մառաս  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ երկու կողերու վրայ սեւ թաւապատ տախտակի վրայ հինգական արդյրեայ կերպարներ: Ունի չորս կղպանքներ: Նշմարելի է իտալական ոսկերչութեան ազդեցութիւնը եւ վստահ ենք որ այն կատարուած է Հայաստանէն դուրս:

59

Ձեռնագիր թիւ՝ 6764, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 24 x 16 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1283 թ.  
ՏԵՂ՝ Սկեռայ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Կեռան Թագուհի (կին Լեւոն Բ. Թագ. -ի)  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ, (հետագայ դարերու գործ է)  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. եւ Բ. կողերը շրջապատուած են արծաթեայ ժապաւէններով: Կռնակը ունի երեք վերադիր շղթաներ, որպէս ծխնի: Կան անցեալի երկու կղպանքներու հետքերը:

60

Ձեռնագիր թիւ՝ 6765, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 24 x 18 x 4 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1692-էն առաջ  
ՏԵՂ՝ անյայտ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչելութիւնը իսկ Բ. -ի վրայ Գրիստոսի ծննդեան տեսարանը: Կռնակը՝ շղթայ, իսկ փականի վրայ չորս աւետարանիչներ եւ արձանազրուութիւն: Ունի նուրբ շղթաներով կառուցուած չորս կղպանքներ:

61

Ձեռնագիր թիւ՝ 6766, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 21,5 x 15,5 x 5,7 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1575 թ.  
ՏԵՂ՝ Բուդանց փող (ոց)՝, Եղովխտ գիւղ  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:

ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ միայն Ա. կողի վրայ: Կեդրոնը դրուագուած արծաթեայ խաչ, իսկ շուրջը չորս կերպարանքներ (աւետարանիչներու?), կան մեծ գամուած գնդիկներ: Անցեալի եօթ ակներէն այժմ կը մնան 6-ը: Շուրջը ցանցկէնային լարերով պատրաստուած: Ամբողջը ոսկերչուած:

62

Ձեռնագիր թիւ՝ 6767, Աւետարան  
ՉԱՓԵՐ՝ 22 x 15,5 x 5 սմ.  
ԺԱՄԱՆԱԿ՝ 1471 թ.  
ՏԵՂ՝ Առեստ գիւղ, Պատաբաստայ վանք  
ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ  
ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Տէր Գրիգոր  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ:  
ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ կան 5 խաչեր եւ հաւանաբար հետագային տեղա-

դրուած չորս զարդաքանդակներ, որոնք թէեւ արծնապատ, սակայն կը պահեն յստակ ազգային դիմագիծ: Բ. կողի վրայ գնդիկներէ կազմուած խաչ: Ունի երկու կղպանքներ արծաթեայ եւ մետաքսեայ ժանեակներով:

63

Ձեռնագիր թիւ՝ 6768, Աւետարան ՉԱՓԵՐ՝ 21 x 15,5 x 3,2 սմ. ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ դար ՏԵՂ՝ անյայտ (հաւանաբար Կարին) ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ: ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչելու թիւն եւ երկու սիւններ, ձուլածոյ, իսկ մնացեալը խիտ ցանցկէնային աշխատանք: Կան 81 յակիրթ, զմրուխտ եւ այլ ակներ: Բ. կողի վրայ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, ձուլածոյ, իսկ մնացեալ մասերը նախորդի նման: Երկու երեսներու վրայ կան արծնապատ տերեւներ: Կոնակը ինքնատիպ կառուցումով շղթայ, շատ յարվար աշխարհիկ զարդերու համար: Փակակը նոյն ոճով, զարդարուած 40 ակներով: Կը պատկանի Կարնոյ ոսկերչական դպրոցին:

64

Ձեռնագիր թիւ՝ 6769, Աւետարան ՉԱՓԵՐ՝ 20 x 13,5 x 3,7 սմ. ԺԱՄԱՆԱԿ՝ 1637 թ. ՏԵՂ՝ անյայտ ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Սարգիս ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ: ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ Աստուածամայր եւ Յիսուս Մանուկ, իսկ Բ.-ի վրայ խաչելութիւն, դրուագուած: Կոնակը շատ ուշադրաւ շղթաներով գործուած: Փակակի վրայ դրուագուած են չորս կերպարանքներ: Ունի շատ գեղակերտ երկու կղպանքներ, որոնք իրենց ոճով կը միաձուլուին ընդհանուրի հետ:

65

Ձեռնագիր թիւ՝ 6770, Աւետարան ՉԱՓԵՐ՝ 19 x 13 x 5 սմ.

ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ դար ՏԵՂ՝ անյայտ ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) անյայտ ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ: ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ վեց կողմերէն՝ Ա. կող, Բ. կող, կոնակ եւ փական, իսկ վերեւի եւ ներքեւի մասերը որոնք ուրիշ կազմերու վրայ չեն արծաթապատուած, այստեղ նոյն ոճի աշխատանքով ծածկուած են: Ա. եւ Բ. կողերու վրայ խաչելութիւն, ծաղիկներ եւ արձանագրութիւն, նոյնը կոնակի վրայ: Փակակի վրայ կան չորս աւետարանիչներու, իսկ վերեւի եւ ներքեւի ծածկոյթներուն վրայ Պօղոս եւ Պետրոս առաքեալներու կերպարանքները, բոլորը դրուագուած:

66

Ձեռնագիր թիւ՝ 6771, Աւետարան ՉԱՓԵՐ՝ 17,5 x 13,5 x 3,5 սմ. ԺԱՄԱՆԱԿ՝ արծաթապատուած է 1747 թուին ՏԵՂ՝ յերկիրս Գանճոցու (Գանճակ?), ի գեղս Գուլլար: ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Տարչին ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ կազմի մասին տեղեկութիւն չկայ: ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Արծաթապատ տախտակ, չորս կողմերէն դրուագուած ոճաւորուած ծաղկանկարներով: Ա. կողի կեդրոնը ձուլածոյ, փոքր խաչելութիւն, իսկ Բ.-ի վրայ Աստուածածին եւ Յիսուս Մանուկ, նոյնպէս ձուլածոյ: Կղպանքը մաս կը կազմէ փականին:

67

Ձեռնագիր թիւ՝ 6772, Աւետարան ՉԱՓԵՐ՝ 18,5 x 12,5 x 6,5 սմ. ԺԱՄԱՆԱԿ՝ 1659 թ. ՏԵՂ՝ Սպահան (Նոր Զուլայ) ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ՝ անյայտ ՍՏԱՑՈՂ՝ (ՆԵՐ) Վարդան ԱՐԾԱԹԱՊԱՏՈՂ՝ անյայտ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ ....յամի հազարերորդի եւ հարիւրերորդի եւ ութերորդի..... ի հայրապետութեան տ(եառ)ն Յ(ա)կ(ո)ք(ա)յ Զուլայեցոյ ի Վ(ա)ղ(ա)րչապատ քաղաքի.... ի թ(ա)գ(աւո)րէ տոնի իսմայելի

փոքերն Եսահ Աբասի երկ(որ)դի: ....ես....ու-նայնս ի բարեաց..... Վարդամ ամուսնաբ.....: ԱՐԾԱԹԱՊԱՏՈՒԱԾ է՝ Ա. կողի վրայ խաչելութիւն եւ չորս կերպարներ, իւրաքանչիւրը առանձին ոսկեջրած: Բ. կողը պարզ, անպաճոյճ: Կը պատկանի Նոր Զուլայի հայկական ոսկերչական ենթադպրոցին:

68

